

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ,
ԳՐԱԽՈՍՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ**

- 1.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) մագիստրոսական թեզի (այսուհետ՝ ՄԹ) պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ինստիտուտում մագիստրանտների ամփոփիչ որակավորման, ամփոփիչ որակավորման հանձնաժողովների կազմավորման, որակավորման արդյունքների բողոքարկման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1282-Ն հրամանը, ինստիտուտի կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:
3. Սույն կարգի դրույթները տարածվում են Ինստիտուտի մագիստրատուրայի բոլոր մասնագիտություններով և կրթական ծրագրերով կրթություն ստացող մագիստրանտների վրա:
4. Ամփոփիչ ատեստավորումը նախատեսված է Ինստիտուտի մագիստրանտների մասնագիտական խնդիրներն ու առաջադրանքները կատարելու տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը որոշելու համար, ինչպես նաև պարզել շրջանավարտների պատրաստման մակարդակի համապատասխանությունը բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջներին:
5. ՄԹ իրենից ներկայացնում է գիտական բովանդակությամբ ավարտուն հետազոտական, վերլուծական, կիրառական, տեսական, փորձարարական ինքնուրույն ավարտական ամփոփիչ աշխատանք: Այն հանրագումարային որակավորման կարևորագույն բաղկացուցիչն է և բացահայտում է մագիստրանտի ընդունակությունը լուծելու գիտատեսական և գիտագործնական խնդիրներ՝ ֆիզիկական դաստիարակության, սպորտային պատրաստության, մարզական լրագրության, առողջարարական և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև սպորտի ոլորտի կառավարման և հոգեբանության ժամանակակից համակարգերի զարգացման մակարդակին համապատասխան:
6. ՄԹ գիտական մակարդակը պետք է համապատասխանի մագիստրոսական պատրաստության կրթական ծրագրերի ուղղություններին՝ «Ֆիզիկական դաստիարա-

կության տեսություն և տեխնոլոգիաներ», «Սպորտ և մարզիկների պատրաստության համակարգ», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա», «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա», «Ադապտիվ սպորտ», «Մարզական լրագրություն», «Հոգեբանություն», «Մենեջմենտ» և «Մարկետինգ»:

7. ՄԹ կատարումը և հրապարակային պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:

8. ՄԹ մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 1-2 կիսամյակներում:

9. ՄԹ թեմաները հաստատվում է ռեկտորի հրամանով: ՄԹ թեման և ղեկավարը հաստատվում են մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 20-ը: ՄԹ պատրաստման աշխատանքը ավարտվում է վերջին՝ 2-րդ կիսամյակի ընթացքում: ՄԹ պատրաստման համար հատկացված ժամանակը որոշվում է ըստ ուսումնական պլանի՝ 12 կրեդիտ աշխատաժամավրով:

10. Թեզի գիտական ղեկավար կարող են նշանակվել մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները, մասնագիտական ամբիոնի, ինստիտուտի այլ ամբիոնների պրոֆեսորները կամ դոցենտները, կամ էլ գիտական և գիտահետազոտական հաստատությունների գիտաշխատակիցները: ՄԹ ղեկավարը պետք է ունենա գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, իսկ վերջիններիս բացակայության պարագայում՝ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատողի, ՀՀ վաստակավոր մարզչի, սպորտի վարպետի կոչում:

11. Այն դեպքում, եթե ՄԹ կրում է զուգադրական, միջառարկայական բնույթ կամ կապված է որևէ կազմակերպության թեմատիկայի հետ, որտեղ անց է կացվել մագիստրանտի հետազոտական աշխատանքը, ապա ամբիոնին իրավունք է տրվում հրավիրել գիտական խորհրդատուներ՝ ըստ աշխատանքի առանձին բաժինների:

12. ՄԹ կազմված է տեքստային բաժնից և անհրաժեշտության դեպքում հավելվածներից:

13. ՄԹ ենթարկվում է գրախոսության ինստիտուտի այլ ամբիոնների կամ գործատուների կողմից:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2.1 Ինստիտուտի ՄԹ բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի ու ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները սահմանվում են սույն Կարգով:

Ստորև ներկայացնում ենք ՄԹ բովանդակային բաղադրիչները.

- Տիտղոսաթերթ:
- Համառոտագիր:
- Բովանդակություն:
- Ներածություն:
- Հիմնական մաս:
- Եզրակացություն:
- Առաջարկություններ:
- Օգտագործված գրականության մատենագիտական ցանկ:
- Հավելված (ներ):

➤ **Տիտղոսաթերթ:** ՄԹ տիտղոսաթերթն առաջին էջն է (հավելված 1), որը չի համարակալվում: ՄԹ բոլոր ձևերի տիտղոսաթերթի վերին հատվածում գրվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, մեկ տող ներքև ինստիտուտի ամբողջական անվանումը՝ գլխատառերով և 12 տառաչափով:

Հաջորդ տողում նշվում է մագիստրոսական կրթական ծրագրի անվանումը:

ՄԹ տիտղոսաթերթի միջին մասից փոքր ինչ վերև գրվում է մագիստրանտի ազգանունը, անունը և հայրանունը՝ գլխատառերով և 13 տառաչափով, ապա դրվում է նրա ստորագրությունը: Մեկ ինտերվալ ներքև նշվում է ՄԹ անվանումը՝ գլխատառերով և 13 տառաչափով:

Այնուհետև գրվում է մագիստրանտի աստիճան հայցելու թեզ՝ (առանց չակերտների, տառատեսակը 12): Տիտղոսաթերթի ստորին մասի աջ անկյունում նշվում է գիտական ղեկավարի գիտական աստիճանը, գիտական կոչումը, և տվյալների առջև դրվում է նրա ստորագրությունը: Ձախ անկյունում նշվում է գրախոսի գիտական աստիճանը, գիտական կոչումը, և տվյալների առջև դրվում է նրա ստորագրությունը: Այնուհետև նշվում է ՄԹ կատարման տարին և քաղաքը (առանց նշելու «տարի» և «քաղաք» բառերը): ՄԹ թեմաների անվանումները գրվում են ուղիղ գլխատառերով (մեծատառերով): Թեմայի անվանումը պետք է նույնական լինի ՄԹ թեմաների հաստատմամբ ձևակերպված ռեկտորի հրամանին:

➤ **Համառոտագիր:** Տրվում են թեզի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումները, իսկ նպատակը և ստացված արդյունքները ներկայացվում են միայն հայերեն (մեկ էջի սահմաններում):

➤ **Բովանդակություն:** Բովանդակությունը պետք է համապատասխանի ՄԹ տեքստին: Բովանդակությունը սկսվում է ներածությունից և ընդգրկում է բոլոր բաժինների, ենթաբաժինների, ինչպես նաև կետերի, ենթակետերի (եթե նրանք անվանում ունեն) անվանումները, եզրակացությունը, օգտագործված աղբյուրների ցանկը, հավել-

վածների անվանումն ու նշանակությունը՝ նշելով այն էջերը, որտեղից սկսվում են ՄԱ տվյալ հատվածը: Բովանդակությունը չի ներառում տիտղոսաթերթը:

«Բովանդակություն» բառը գրվում է տողի կենտրոնում՝ գլխատառերով, տառաչափը 12, առանց վերջակետի, չի ընդգծվում:

➤ **Ներածություն:** ՄԹ ներածությունն առավել պատասխանատու մասն է, քանի որ աշխատանքի մասին հակիրճ պատկերացում կազմվում է հենց դրա ուսումնասիրության արդյունքում: Այն պետք է արտահայտի՝

- ՄԹ թեմայի արդիականությունը,
- աշխատանքի նպատակը ու խնդիրները, վարկածը, օբյեկտը, առարկան, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը,
- աշխատանքում օգտագործվող հետազոտության մեթոդները,
- հետազոտության գործնական և տեսական նշանակությունը,
- հետազոտության քանակակազմը, կազմակերպումը և վայրը,
- աշխատանքի ծավալը և կառուցվածքը:

«Ներածություն» բառը գրվում է տողի կենտրոնում՝ գլխատառերով, տառաչափը՝ 12, առանց վերջակետի, չի ընդգծվում:

➤ **Հիմնական մաս:** ՄԹ հիմնական մասը պետք է պարունակի բաժիններ, որոնք արտահայտում են առաջադրանքին համապատասխանող հիմնական խնդիրների էությունը, մեթոդիկան, լուծումը և աշխատանքի հետևյալ հիմնական արդյունքները.

ա) հետազոտության ուղղության ընտրություն, որը ներառում է հետազոտության ուղղության հիմնավորումը, խնդիրների լուծման մեթոդները և դրանց համեմատական գնահատականը: Այս բաժնում տրվում է ընտրված հետազոտման խնդրի տեսական հիմնավորումը: Այն կատարվում է աղբյուրների վերլուծության հիման վրա, որտեղ առաջարկվում է հետազոտման խնդրի վերաբերյալ սեփական տեսակետը, արվում են թեմայի արդիականությանը վերաբերող դատողություններ,

բ) տեսական և (կամ) փորձարարական հետազոտությունների նկարագրումը, ինչպես նաև տեսական հետազոտությունների բնույթի և բովանդակության որոշումը, փորձարարական աշխատանքների անցկացման անհրաժեշտության հիմնավորումը,

գ) Հիմնական մասի բաժինների քանակը համաձայնեցվում է ղեկավարի հետ: ՄԹ հիմնական նյութի բաշխումն ըստ հիմնական մասի բաժինների, ենթաբաժինների և այլն, որոշվում է ՄԹ հեղինակի կողմից: ՄԹ տեքստը պետք է բավարարի ավարտված աշխատանքներին առաջադրվող հիմնական պահանջներ, այն է կառուցվածքի հստակություն, տրամաբանություն և հաջորդականություն, բերված տեղեկությունների ճշգրտություն, նյութի պարզ և հակիրճ շարադրում, շարադրման համապատասխանությունը գրական լեզվի չափանիշներին:

➤ **Եզրակացություն:** Եզրակացությունը պետք է պարունակի ՄԹ արդյունքներին վերաբերող հակիրճ դատողություններ (մեկնաբանություններ)՝ առաջադրանքի կատարման ամբողջականության և գնահատման, խորհրդատվություն աշխատանքի արդյունքները տեսականորեն և գործնականորեն կիրառելու վերաբերյալ և բովանդակային առումով համապատասխանի ներածության մեջ առաջադրված

խնդիրներին և արտացոլի գիտական վարկածի բովանդակությունը: «Եզրակացություն» բառը գրվում է տողի մեջտեղում՝ գլխատառերով, տառաչափը՝ 12, առանց վերջակետի, չի ընդգծվում:

➤ Անհրաժեշտության դեպքում եզրակացություններից հետո բերվում են **գործնական առաջարկություններ** (վարժությունների կիրառման, մարզման մեթոդիկայի, մանկավարժական թեստավորման և այլնի վերաբերյալ):

➤ **Օգտագործված գրականության մատենագիտական ցանկ:** ՄԹ գրելիս հաճախ հարկավոր է օգտվել տարբեր հեղինակների աշխատություններից: Այս դեպքում անհրաժեշտ է վկայակոչել այս կամ այն աղբյուրը: Պետք է նաև ուշադրություն դարձնել օգտագործված աղբյուրների հստակ մատնանշմանը:

- Օգտագործված աղբյուրների վկայակոչման ժամանակ նշում են աղբյուրի գրական նկարագրության կարգային թիվը՝ օգտագործված աղբյուրների ցանկից: Վկայակոչման կարգային համարը գրվում է ուղղանկյուն փակագծերի մեջ, օրինակ՝ [19]: Վկայակոչումների համարակալումը կատարվում է արաբական թվերով՝ ըստ տեքստում բերված վկայակոչումների կարգի:
- Այլ լեզուներով գրականությունը զետեղվում է հայերեն հրատարակված գրականությունից հետո, տվյալ լեզվի համար դարձյալ այբբենական կարգով: Տվյալները հեղինակի մասին ընդգրկում են նրա ազգանունը լրիվ և անվան, հայրանվան առաջին տառերը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը): Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները: Երկու և ավելի հեղինակների դեպքում տողով կամ սյունակով տրվում են բոլոր հեղինակների անունները՝ պահպանելով ընդունված կանոնները:
- Աղբյուրների նկարագրությունը բերվում է բնօրինակի լեզվով:
- Ատենախոսությունները և սեղմագրերը հրատարակություն չունեն և ընդունվում են որպես ձեռագրեր: ՄԹ չեն տրվում հրատարակման տեղեկությունները:
- Այն դեպքում, երբ մեջբերում է կատարվում ամսագրերից, ժողովածուներից ապա տրվում են՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը (ազգանունները), անունը (անունները), նյութի անվանումը, հրատարակման անվանումը, հրատարակման տարեթիվը, համարը: Քանակական ցուցանիշներում տրվում են էջերը, որոնցում տպագրված է նյութը: Ինտերնետից օգտվելու դեպքում հասցեն է գրվում լիարժեք:
- «Օգտագործված գրականության մատենագիտական ցանկը» գրվում է տողի մեջտեղում՝ գլխատառերով, տառաչափը՝ 12, առանց վերջակետի, չի ընդգծվում:

➤ **Հավելվածներ:** ՄԹ հավելված նյութը ներկայացվում է պատահանների, նկարների, գծապատկերների, սխեմաների, լուսանկարների, աղյուսակների և այլնի տեսքով: Հավելված նյութի կիրառման նպատակը ՄԹ պաշտպանության ժամանակ աշխատանքի հիմնական մասերի ցուցադրումն է, որոնք արտահայտում են կատար-

ված տեսական հետազոտությունների և կիրառական մշակումների, եզրակացությունների և երաշխավորագրերի էությունը: Թույլատրվում է օգտագործել կինո և տեսահոլովակներ:

Թեզի հավելվածներում մագիստրանտը ներկայացնում է հետազոտության ընթացքը հստակեցնող և լրացնող օժանդակ նյութեր (նորմատիվային ակտեր, փորձարկումների արձանագրություններ, հարցաթերթիկներ, աշխատանքային փաստաթղթեր և այլն):

- Նպատակահարմար է հավելվածներում կիրառել գրաֆիկական նյութեր, աղյուսակներ: Բոլոր հավելվածները պարտադիր համարակալվում են և թեզի մեջ նրանց մեջբերումները պարտադիր են:
- Հավելվածները գրվում են թվանիշերով (1,2,3): «Հավելված» բառին հաջորդում է նրա հաջորդականությունն արտահայտող թիվը, օրինակ՝ Հավելված 1:
- Հավելվածները գրվում են նույնպես A4 ֆորմատի թղթերի վրա, թույլատրվում են նաև A3 ֆորմատի թղթերը:
- Հավելվածները պետք է ՄԹ մնացած մասի հետ ունենան էջերի ընդհանուր միջանցիկ համարակալում:

2.2 Մագիստրոսական թեզի կառուցվածքային պահանջները

- Մագիստրոսական թեզի տպագրվում է համակարգչով՝ A4 չափի (210x297մմ) սպիտակ թղթի մեկ երեսին, էջում՝ 28-30 տող, 12 տառաչափով, սև տառերով, 1.5 քայլքով (ինտերվալով): Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ: Յուրաքանչյուր տողում տեղադրվում է 60-65 նիշ, հաշվի առնելով միջբառային դատարկանիշերը և կետադրության նշանները:
- Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մոտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Հայերենի դեպքում տառատեսակը ցանկալի է լինի GHEA Grapalat (Sylfaen), ռուսերենի դեպքում՝ Times New Roman:
- Աղյուսակների, նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են նույն էջի ներքևում կամ վերևում՝ անհրաժեշտության դեպքում կարող են տրվել նաև ծանոթագրություններ: Դրանք կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, պետք է շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով, որ շարունակությունն է: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան. պետք է դնել գծիկ կամ գրել «չկա» («չի որոշված»): ՄԱ ծավալը պետք է լինի նվազագույնը 40-60 տպագրական էջ՝ առանց հավելվածների: Որոշ դեպքերում էջերի քանակը կարող է տատանվել՝ կախված թեմայի բնույթից:
- Աշխատանքի բոլոր էջերը պետք է համարակալվեն արաբական թվերով էջի ստորին մասի կենտրոնում, առանց կրկնվելու և բացթողումների:

- Տիտղոսաթերթը համարվում է թիվ մեկ էջը և չի համարակալվում: Թիվ 2 էջն է համարվում առաջին վերնագրված էջը՝ համառոտագիրը, որից սկսվում է համարակալումը:
- Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Աշխատանքի յուրաքանչյուր գլուխը սկսվում է նոր էջից, ինչպես նաև՝ ներածությունը, (նախաբանը) եզրակացությունները, գրականության մատենագիտական ցանկը, հավելվածները:
- Թեզի գլուխները համարակալվում են հռոմեական, իսկ բաժինները և ենթաբաժինները արաբական թվերով, որոնցում նշվում է գլխի, բաժնի և ենթաբաժնի թիվը բաժանված կետով (օրինակ՝ III.3.1): Գլուխների անվանումները գրվում են գլխատառերով, իսկ բաժինները տողատառերով, բացի առաջին տառից, առանց ընդգծելու: Բառափոխադրումներ չեն թույլատրվում, վերջակետ չի դրվում: Վերնագրերը բաժանվում են հիմնական տեքստից 1 ինտերվալով, նույնը պահպանվում է բաժինների և ենթաբաժինների համար:
- Աշխատանքի տեքստը բաժանվում է ինքնուրույն հատվածների (պարբերություն)՝ ըստ տրամաբանության: Յուրաքանչյուր հատված սկսվում է նոր տողից՝ հետ դրվելով սկզբնակետից 1 սմ՝ ավտոմատ կերպով: Թեզի տեքստում ուղղումներ չեն թույլատրվում:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՒԼԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1 Մագիստրոսական թեզի կատարման փուլերը

N	Գործողություն	Կատարման փուլեր
1.	Թեմայի ընտրություն և հաստատում, գիտական ղեկավարի նշանակում և հրամանագրում	Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներ
2.	Թեզի օրացուցային պլանի (ժամանակացույցի) մշակում գիտական ղեկավարի օգնությամբ (1-ին կիսամյակ)	1-ին կիսամյակ
3.	Ուսումնական, գիտական-տեղեկատվական հրապարակումների և Վեբկայքերի որոնում, ընտրում, վերլուծում և ընդհանրացում	1-ին և 2-րդ կիսամյակներ
4.	Թեզի հետազոտական մասին նցկացում, փորձարարական փաստացի նյութերի հավաքագրում	1-ին և 2-րդ կիսամյակներ
5.	Թեզի ձեռագիր տարբերակի ստուգում և հղկում գիտական ղեկավարի կողմից	1-ին կիսամյակի ավարտ և 2-րդ կիսամյակի սկիզբ
6.	Ելույթներ գիտական կոնֆերանսներում	1-ին և 2-րդ կիսամյակներ
7.	Թեզի տեքստի շարադրում, խմբագրում և ձևավորում	2-րդ կիսամյակ
8.	Թեզի ներկայացումը գիտական ղեկավարին՝ կարծիքի, գրախոսին՝ գրախոսելու համար	2-րդ կիսամյակ
9.	Թեզն ավարտական տեսքով ներկայացնել ամբիոն	2-րդ կիսամյակ
10.	Թեզի նախնական պաշտպանության ներկայացում	2-րդ կիսամյակ
11.	Թեզի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում	2-րդ կիսամյակ

3.2 Մագիստրոսական թեզի կատարման ընթացքում մագիստրանտի պարտականությունները՝

- ընտրելով հետազոտության օբյեկտը՝ մագիստրանտը հավաքում է անհրաժեշտ տվյալներ, ուսումնասիրում է հետազոտությանը կամ մշակմանը վերաբերող գրականություն, անց է կացնում համանման խնդիրների շրջանակներում գոյություն ունեցող գրականության վերլուծություն,
- ինքնուրույն գնահատել ՄԹ թեմայի խնդրի հետ կապված արդիականությունը և նշանակությունը,
- ղեկավարի հետ համատեղ կազմել ՄԹ խնդրի հետ կապված հանձնարարությունը,
- հավաքել և մշակել ՄԹ թեմայի շրջանակներում տեղեկատվությունը, ուսումնասիրել և գործնականորեն վերլուծել ստացված նյութերը,
- ինքնուրույն ձևակերպել ՄԹ նպատակն ու խնդիրները,
- անցկացնել հետազոտություններ, մշակումներ, ՄԹ խնդրին համապատասխան հաշվարկներ, տալ խնդրի լուծման մասնագիտական փաստարկման տարբերակը,
- հաշվի առնելով ղեկավարի և խորհրդատուների կարծիքը՝ ընդունել ինքնուրույն որոշումներ,
- ձևակերպել ՄԹ տեքստում խնդիրների լուծումը, գրաֆիկական մասը և այլ փաստաթղթերը: ՄԹ արդյունքները ներկայացնելու համար պատրաստել նմուշներ (սլայդներ, տեսահոլովակներ, համակարգչային ներկայացման ծրագրեր և այլն):
- ձևակերպել տրամաբանորեն հիմնավորված եզրակացություններ, առաջարկություններ՝ ստացված արդյունքները գործնականում կիրառելու համար,
- ՄԹ պաշտպանության համար պատրաստել ատենաճառ (զեկուցում), որը ներկայացնելու համար մագիստրանտին տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:
- ՄԹ պաշտպանության ժամանակ ատենաճառում պետք է ներկայացվեն՝ թեզի թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտի, առարկայի և վարկածի նկարագրությունը, աշխատանքի մեջ օգտագործվող հետազոտության մեթոդները:
- Ատենախոսը պատասխանատու է ՄԹ բովանդակության համար, որը հաստատվում է ՄԹ տիտղոսաթերթի վրա նրա ստորագրությամբ:
Թեզի պատրաստման և պաշտպանության գործընթացում մագիստրանտը պետք է ցուցաբերի՝
 - ինքնուրույն ստեղծագործական մտածելակերպ,
 - աշխատանքի ընթացքում կատարվող հետազոտությունների մեթոդների և մեթոդիկաների տիրապետում,
 - ձեռք բերված արդյունքների գիտական վերլուծության, աշխատանքի ընթացքում ստացված եզրակացությունների և դրույթների մշակման ընդունակություն,
 - գործնական և գիտական գործունեության մեջ ստացված արդյունքների օգտագործման հնարավորությունները գնահատելու կարողություն:

3.3 Մագիստրոսական թեզի խորհրդատուի պարտականությունները՝

- ՄԹ ղեկավարի համաձայնությամբ ձևակերպում է հանձնարարությունը համապատասխան բաժնի կատարման համար,
- որոշում է ՄԹ համապատասխան բաժնի կառուցվածքը,
- ատենախոսին խորհրդատվությունների միջոցով ցուցաբերում է մեթոդական օգնություն, գնահատում է ընդունված որոշումների թույլատրելիությունը,
- ստուգում է բաժնի ծավալի և բովանդակության համապատասխանությունը հանձնարարությանը,
- եզրակացություն է տալիս ՄԹ համապատասխան բաժնի՝ պաշտպանությանը պատրաստ լինելու մասին, որը հաստատվում է տիտղոսաթերթի վրա ստորագրությամբ:

3.4 Ղեկավարի պարտականությունները՝

- ՄԹ արդիականության, կրթական ծրագրին նրա թեմատիկայի համապատասխանության, ղեկավարման, կատարման և կազմակերպման համար պատասխանատու է թողարկող ամբիոնը և աշխատանքի անմիջական ղեկավարը,
- ՄԹ ղեկավարը ՄԹ ղեկավարման համար հատկացված ժամերի ծավալով՝ ձևակերպում է ՄԹ հանձնարարությունը,
- ՄԹ թեմայի ընտրության և նրա կատարման պլանի մշակման հարցում մագիստրանտին ցուցաբերել գործնական օգնություն,
- խորհուրդ է տալիս մագիստրանտին անհրաժեշտ հիմնական գրականությունը, տեղեկատուները և արխիվային նյութերը, տիպային ծրագրերը և ՄԹ թեմայով այլ աղբյուրները,
- մագիստրանտի հետ իրականացնում է պարբերական հանդիպումներ, իրականացնում է խորհրդատվություն, ստուգում է աշխատանքի կատարումը՝ սույն չափորոշիչի հետ համապատասխանության տեսանկյունից,
- մագիստրանտին նախապատրաստում է ՄԹ նախնական պաշտպանությանը և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առջև հրապարակային պաշտպանությանը:
- ՄԹ գնահատման օբյեկտիվության մակարդակի ապահովման նպատակով ղեկավարը գնահատում է թեզը Ինստիտուտի կողմից հաստատված չափանիշների համաձայն (հավելված 3):
- ղեկավարը պետք է բնութագրի հետազոտողի աշխատանքի ընթացքը, աշխատանքի ընթացքում որակավորվողի կողմից ցուցաբերված ինքնուրույնության և ստեղծագործական մոտեցման աստիճանը, ատենախոսի հետազոտական, գործնական գործունեության բնութագիրը, նյութերի հավաքագրման, դասակարգման, դրանց կիրառման ուղղությամբ աշխատանքները կազմակերպելու կարողությունը, հրատարակված հոդվածների քանակը, կոնֆերանսներին ելույթների քանակը, դրանց թվարկումը, տվյալ թեմայի շրջանակներում որակավորվողի աշխատանքի ժամկետը:
- ՄԹ հաստատելուց հետո ղեկավարը տալիս է գրավոր կարծիք, որում արտացոլվում են.

- ա) աշխատանքի արդիականությունը և կարևորությունը,
- բ) մագիստրանտի՝ ինքնուրույն հետազոտություն կատարելու, տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը,
- գ) աշխատանքում գիտական, մեթոդական և/կամ գործնական նորույթ պարունակող տարրերի առկայությունը,
- դ) գործնական առաջարկությունների/երաշխավորությունների առկայությունը,
- ե) կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները,
- զ) թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,
- է) երաշխավորություն թեզի հրապարակային պաշտպանության համար:

3.5 Մագիստրոսական թեզի նախապաշտպանության ընթացակարգը

- Կատարած աշխատանքը հանձնվում է գիտական ղեկավարին, որը ստուգելուց հետո կարող է թույլատրել նախնական պաշտպանության կամ անհրաժեշտության դեպքում վերադարձնել լրացուցիչ մշակման:
- ՄԹ կատարման եզրափակիչ փուլում, երբ աշխատանքը սկզբնական տարբերակով պատրաստ է, ներկայացվում է ամբիոն քննարկման և նախնական պաշտպանության:
- Նախապաշտպանության նպատակն է օգնել ատենախոսին պատրաստվել պաշտպանությանը՝ ճիշտ կազմակերպել ատենաճառը, ընդգծել կարևոր պահերը, օգտագործել պատկերազարդ (գրաֆիկական) նյութը, ստանալ հանրային ելույթի հմտություններ, հարցերի պատասխաններ:
- Նախապաշտպանության և հիմնական պաշտպանության անցկացման ժամկետները որոշվում են մագիստրատուրայի բաժնի կողմից:
- Նախնական պաշտպանությունը կատարվում է մասնագիտական ամբիոնում, որին մասնակցում են ամբիոնի վարիչը, մագիստրատուրայի բաժնի ղեկավարը, ուսանողի գիտական ղեկավարը, ինչպես նաև ամբիոնի դասախոսները, որոնք կարող են հայտնել իրենց կարծիքը աշխատանքի վերաբերյալ: Պաշտպանությանը պետք է ներկա լինեն կրթական ուղղության մյուս մագիստրանտները և մասնակցեն քննարկմանը:
- Թեզի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում (աշխատանքում այլ աղբյուրներից առանց հղման, զգալի չափով օգտագործված ցանկացած նյութ (տեքստ) համարվում է գրագողություն) աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:
- Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:
- Նախապաշտպանությունն անց է կացվում ոչ ուշ քան պաշտպանությունից 20 օր առաջ:
- Նախնական պաշտպանությանը անհրաժեշտ է պատրաստվել շատ հիմնովին, որովհետև այնտեղ է կատարվում մանրազնին քննարկում, տրվում են գործնական առաջարկություններ՝ աշխատանքը բարելավելու համար: Այն կատարվում է

գիտական ղեկավարի հսկողության տակ և հանդիսանում է որպես փորձարկում հիմնական պաշտպանությունից առաջ:

- Նախնական պաշտպանությանը պատրաստվելիս մագիստրանտը կազմում է իր զեկուցումը՝ նախատեսված 15 րոպեի սահմաններում, որում համառոտ շարադրվում են հետազոտման հիմնական հարցերը:
- Պաշտպանությանը երաշխավորված աշխատանքն ուղարկվում է այլ ամբիոններ, ցանկալի է նաև այլ կազմակերպություն, գրախոսման:
- Պաշտոնական ընդդիմախոսն թեզի հետ ծանոթանալուց հետո տալիս է համապատասխան կարծիք: Անհրաժեշտ ճշտումներ կատարելու համար թեզը տրվում է մագիստրանտին, որից հետո մագիստրանտը պետք է այն վերադարձնի է ոչ ուշ քան 7 օր պաշտպանությունից առաջ:
- Եթե մագիստրանտը հարգելի պատճառներով բաց է թողել վերոհիշյալ ընթացակարգը, ապա նա կարող է համապատասխան փաստաթղթի ներկայացման և համապատասխան ամբիոնի վարիչի թույլտվության դեպքում անցնել ընթացակարգը՝ համապատասխան ամբիոնի հաստատած ժամկետում:

3.6 Մագիստրոսական թեզի գրախոսումը և գրախոսի գործառույթները

- Մագիստրոսական թեզերը, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ենթակա են գրախոսման:
- Գրախոս կարող են լինել Ինստիտուտի համապատասխան ամբիոնների կամ այլ բուհերից դասախոսներ, գիտական կազմակերպությունների, մարզական և առողջարարական կենտրոնների մասնագետներ:
- ՄԹ գրախոսը, որպես կանոն, պետք է ունենա գիտական աստիճան կամ լինի հայտնի մասնագետ մասնագիտության ոլորտում:
- ՄԹ գրախոսության համար աշխատանքը տրվում է ոչ ուշ, քան թեզի հիմնական պաշտպանությունից 10 օր առաջ: ՄԹ գրախոսը պարտավոր է գրախոսական կարծիքը ներկայացնել թեզը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում:
- Գրախոսը հանդես է գալիս փորձագետի դերում, որին համապատասխան նրա գրախոսությունը պետք է բովանդակի աշխատանքի ավելի բազմակողմանի բնութագիր: Նա որոշում է աշխատանքի թեմայի արդիականության աստիճանը, ներկայացված նյութի համապատասխանելիությունը ՄԹ խնդրին, ՄԹ կատարման մակարդակը՝ համապատասխան Ինստիտուտի կողմից հաստատված չափանիշների (հավելված 3):
- Բոլոր անհրաժեշտ ստորագրությունների, դրական կարծիքների և գրախոսության առկայության դեպքում ՄԹ պաշտպանության համար թույլատվությունը ձևակերպվում է ամբիոնի վարիչի ստորագրությամբ ՄԹ տիտղոսաթերթի վրա:
- Բացասական գրախոսության դեպքում ամբիոնի վարիչը պարզաբանում է խնդիրը գրախոսի, ատենախոսի և նրա ղեկավարի հետ, հաշվի է առնում նրանց կարծիքը, ընդունում որոշում պաշտպանությանը թույլատրելու մասին:

- Մագիստրոսական թեզների համար ղեկավարի կարծիքը կամ բացասական գրախոսությունը, եթե ատենախոսը համաձայն չի դրա հետ, չեն խոչընդոտում պաշտպանությանը:

3.7 Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպումը և ԱԱՀ-ի գործառույթները

- Ինստիտուտում մագիստրանտի ամփոփիչ ավարտական որակավորումն անց է կացվում եվրոպական և ազգային որակավորումների շրջանակի պահանջների հաշվառմամբ, ՀՀ ԿԳՆ հրամանով հաստատված ՀՀ բուհերի շրջանավարտների ամփոփիչ ամփոփիչ ատեստավորման մասին կարգի դրույթներով, սույն Կարգով:
- Մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմավորման աշխատանքները համակարգում է ինստիտուտի մագիստրատուրայի բաժինը: ՄԹ պաշտպանության համար կազմվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներ (այսուհետ՝ ՄԹ ԱԱՀ)՝ ըստ բարձրագույն մասնագիտական կրթության յուրաքանչյուր կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:
- ԱԱՀ-ը գլխավորում է նախագահը, ով կազմակերպում և վերահսկում է քննական հանձնաժողովների գործունեությունը, ապահովում է մագիստրանտներին ներկայացվող ընդհանուր պահանջները: ԱԱՀ-ը գլխավորում է նախագահը, ով ներկայացվում է մագիստրատուրայի բաժնի ղեկավարի կողմից և հաստատվում է բուհի ռեկտորի հրամանով՝ ԱԱՀ-ի կազմի հետ միասին: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է ինստիտուտի ռեկտորը ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին մագիստրատուրայի բաժնի ղեկավարի ներկայացմամբ, նշանակում է ինստիտուտի ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական, մարզական հաստատությունների գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող մասնագետներից, ովքեր տվյալ հաստատության աշխատողներ չեն և նախորդող երեք տարիների ընթացքում չեն եղել տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, մագիստրատուրայի բաժնի պետը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ:

- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ոչ ինստիտուտի աշխատակիցներ:
- Բարձրագույն մասնագիտական կրթության՝ ըստ յուրաքանչյուր հիմնական կրթական ծրագրի անցկացվող ՄԹ ԱԱՀ-ի աշխատանքների ժամանակացույցը կազմվում է ինստիտուտի ուսումնական մասի կողմից մագիստրատուրայի բաժնի հետ համատեղ:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝
 - 1) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,
 - 2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,
 - 3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:
- Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, որը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, մագիստրատուրայի բաժնի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ռեկտորը, և մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:
- ՄԱ պաշտպանությանը թույլատրվում է այն շրջանավարտը, որը յուրացրել է մագիստրոսական հիմնական կրթական ծրագիրը և կուտակել է համապատասխան կրեդիտներ:
- Ներկայացված աշխատանքի և որակավորվողի պատրաստվածության մակարդակի մասին եզրակացություն ներկայացնելիս ԱԱՀ-ը կողմնորոշվում է իր անդամների կարծիքով՝ հաշվի առնելով ղեկավարի և գրախոսի կարծիքները:
- ՄԱ ԱԱՀ-ի բոլոր որոշումները ձևակերպվում են արձանագրություններով: Արձանագրությունները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և քվեարկությանը մասնակցած անդամների կողմից: Արձանագրությունների մատյանը պահվում է մագիստրատուրայի բաժնում:
- ԱԱՀ-ի աշխատանքների հաշվետվությունները քննարկվում են Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից: Մագիստրանտների պետական ամփոփիչ որակավորումների քաղվածքները պահվում են արխիվում:
- Պաշտպանությունից 5 օր առաջ յուրաքանչյուր ամբիոնի վարիչ մագիստրատուրայի բաժին է ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝
 - մագիստրոսական թեզը,
 - մագիստրանտի բնութագիրը,
 - ղեկավարի կարծիքը,
 - պաշտոնական գրախոսի կարծիքը,
 - ՄԹ բնութագիրը (համաձայն ամբիոնի որոշման):

Մագիստրատուրայի բաժինը բոլոր մագիստրանտների վերը թվարկված փաստաթղթերը հանձնում է ԱԱՀ-ի քարտուղարին:

3.8 ԱԱՀ-ի քարտուղարի պարտականությունները՝

- կազմել ԱԱՀ-ի նիստերի պլանը,
- տեղեկացնել ԱԱՀ-ի անդամներին գալիք նիստերի մասին, ապահովել քվորումը,
- տեղադրել տեղեկատվություն ՄԹ գալիք պաշտպանությունների մասին /թեմա, ատենախոսի և ղեկավարի ազգանուններ/ հատուկ ցուցափեղկի վրա,
- պատրաստել փաստաթղթեր և նյութեր ԱԱՀ-ի նիստի համար,
- կազմել ԱԱՀ-ի նիստերի քաղվածքները,
- պատրաստել տեղեկատվություն ԱԱՀ-ի ղեկավարի համար նիստերի քաղվածքների հիման վրա,
- ԱԱՀ-ի ամբողջական աշխատանքի ավարտից հետո բոլոր փաստաթղթերը հանձնել մագիստրատուրայի բաժին:

3.9 Մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգը՝

- ՄԱ-ի պաշտպանությունն անց է կացվում ԱԱՀ-ի բաց նիստի ժամանակ կազմի ոչ պակաս, քան 2/3-ի մասնակցությամբ:
- Նախագահի կամ նրան փոխարինողի ներկայությունը պարտադիր է:
- ԱԱՀ-ի աշխատանքները սկսելու համար մագիստրատուրայի բաժինը յուրաքանչյուր մագիստրանտի համար պատրաստում է քաղվածք՝ ուսումնական պլանից նշումներով և ուսումնառության ողջ ընթացքում ստացած գնահատականներով:
- ԱԱՀ-ի նիստից առաջ քարտուղարը բոլոր անդամներին բաժանվում է մագիստրանտների մասին տեղեկությունը, որոնց պաշտպանությունը պլանավորված է տվյալ նիստի համար, ինչպես նաև ԱԱՀ-ի անդամների բլանկերը, տեղեկագրերը:
- ԱԱՀ-ի քարտուղարը ԱԱՀ-ի ներկայացուցիչին է փոխանցում ՄԱ ղեկավարի կարծիքը, գրախոսությունը, որը ԱԱՀ-ի ներկայացուցիչներին և ներկաներին տեղեկացնում է մագիստրոսական աշխատանքի թեման, մագիստրանտի ազգանուն, անուն, հայրանունը և ղեկավարի ազգանուն, անուն, հայրանունը, գիտական ղեկավարի կարծիքը:
- Մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացքն արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո 6 ամիս:
- մագիստրանտը ներկայացնում է իր ատենաճառը, որը կարող է տևել մինչև 15 րոպե,
- Մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո հանձնաժողովի անդամներին շրջանավարտին հարցեր տալու և պատասխանների համար տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:

- ընթերցվում է գրախոսությունը (գրախոսի բացակայության դեպքում այն ընթերցում է ԱԱՀ-ի ներկայացուցիչը),
- մագիստրանտին տրվում է հնարավորություն արձագանքելու գրախոսի դիտողություններին և առաջարկություններին,
- թեզի վերաբերյալ ԱԱՀ-ի անդամները տալիս են հարցեր և ստանում մագիստրանտի պատասխանները,
- կազմակերպվում է մտքերի փոխանակում,
- նախագահը հայտարարում է ՄԹ պաշտպանության ավարտը,
- ԱԱՀ-ը գնահատում է ելույթի գրագիտությունը, մասնագիտական բառապաշարի, տերմինաբանության իմացության մակարդակը, հարցերին մասնագիտորեն պատասխանելու ունակությունը, պատկերազարդ նյութերի ներկայացման ամբողջականությունը, տեքստի և ՄԹ գրաֆիկական մասի մեջ նյութերի ներկայացման մակարդակը՝ համաձայն հիմնախնդրին:
- ԱԱՀ-ը ատեստավորման դրական արդյունքների դեպքում ընդունում է որոշում ատենախոսին որակավորում շնորհելու և պետական բարձրագույն մասնագիտական կրթությունը հավաստող դիպլոմ հանձնելու մասին:
- Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:
- Մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված շրջանավարտին թույլատրվում է նոր պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ սահմանված կարգով և ժամկետներում:
- Հարգելի պատճառներով ՄԹ չպաշտպանած անձանց (փաստաթղթով հաստատված բժշկական վկայություններ կամ այլ բացառիկ դեպքեր) հնարավորություն է տրվում մագիստրոսական թեզի պաշտպանելու:
- ՄԹ ԱԱՀ-ի հավելյալ նիստերը կազմակերպվում են ինստիտուտի կողմից սահմանված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան հարգելի պատճառներով ՄԱ չպաշտպանած անձի կողմից դիմում ներկայացնելուց հետո՝ հանձնաժողովի գործունեության հրամանագրված ժամկետներում:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը /հավելված 3/ հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ քննարկվում է ինստիտուտի գիտական խորհրդում և մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ արված առաջարկությունների հետ միասին ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

3.10 Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

Ավարտական ատեստավորման աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են կրեդիտավարկանշային միավորներով, թվային և տառային համարժեքներով և հայտարարվում են նույն օրը ԱԱՀ նիստերի քաղվածքները պատշաճ կերպով ձևակերպելուց հետո: Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 100 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորիշիչների (հավելված 3)

Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 95 %-ը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում: Շրջանավարտի մագիստրոսական թեզի գնահատականը որոշվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

ՄԹ գնահատվում է հետևյալ բաղադրիչներով և համարժեք միավորներով.

- ✓ Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը՝ 10 միավոր
- ✓ Հետազոտության իրականացումը և արդյունքները՝ 30 միավոր
- ✓ Աշխատանքի շարադրումը և ձևավորումը՝ 20 միավոր
- ✓ Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը՝ 40 միավոր:

3.11 Մագիստրոսական թեզի գնահատման արդյունքների բողոքարկման ընթացակարգային պահանջներ

1) Շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ:

2) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում,

3) Մագիստրոսական թեզի պաշտպանությունից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին՝ իր ցանկությամբ տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք, որը տրվում է անվճար, շրջանավարտի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4) մագիստրանտը կարող է բողոքարկել մագիստրոսական թեզի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում,

5) գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:

6) գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են բուհի վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և հաստատության

ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից,

7) շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել,

8) ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցում է արձանագրությանը:

9) գնահատական փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է հատուկ գրառում:

Խնդիրները, որոնք չեն քննարակվում սույն Կարգի մեջ, լուծվում են համաձայն ՀՀ սահմանադրության, համապատասխան օրենքների և ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնակարգերի ու կարգերի:

Մագիստրոսական թեզի տիտղոսաթերթի օրինակելի ձև
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (16 pt, Bold)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ (16 pt, Bold)

Կրթական ուղղություն _____ (12 pt, Bold)

Թողարկող ամբիոն _____ (12 pt, Bold)

Մագիստրանտի **ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ (14 pt, Bold)**

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ (13 pt, Bold)

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ (14 pt, Bold)

« _____ » *մասնագիտությամբ*

_____ *մագիստրոսի որոկավորման*
աստիճանի հայցման համար (12 pt, Bold)

Գրախոս _____
ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն

գիտական կոչում, պաշտոն

« _____ » _____ 20 ____

Գիտական ղեկավար _____
ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն

գիտական կոչում, պաշտոն

Աշխատանքի
գնահատականը _____
նիշը և տարը

ԱԱՀ նախագահ _____
ազգանուն, անուն, հայրանուն ստորագրություն

« _____ » _____ 20 ____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Մագիստրոսական թեզի գնահատման չափորոշիչներ
գրախոսի համար

մագիստրանտ (Ա.Ա.Հ.)

ամբիոն

կրթական ուղղություն

թեմայի անվանումը

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը: (Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան: Կատարված են թեմային առնչվող անհրաժեշտ գրականության վերլուծություն և ամփոփում):

Հետազոտության իրականացումը և արդյունքները (Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան: Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ: Կատարված է արդյունքների ամբողջական վերլուծություն, արված է համապատասխան եզրակացություններ և/կամ առաջարկություններ):

2. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը: (Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը):

Դիտողություններ

Եզրակացություն- (աշխատանքը բավարարում է/չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի շնորհմանը)

Գրախոս _____
ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում

_____ աշխատանքի վայր, պաշտոն

Ստորագրություն _____

« _____ » _____ 20__ թ.

Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչները և միավորները

Մագիստրանտի ազգանուն, անուն, հայրանուն _____

Թեզի թեման _____

Հանձնաժողովի նախագահ/անդամ (ընդգծել)՝ ազգանուն, անուն, հայրանուն, գիտ. աստիճան, կոչում _____

N	Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչներ	Առավելագույն միավոր	Հատկացվող միավոր
1.	Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը	1.1 Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Կատարված են թեմային առնչվող անհրաժեշտ գրականության վերլուծություն և ամփոփում	10	
2.	Հետազոտության իրականացումը և արդյունքները	2.1 Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան	10	
		2.2 Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորոյթ	10	
		2.3 Կատարված է արդյունքների ամբողջական վերլուծություն, արված է համապատասխան եզրակացություններ և/կամ առաջարկություններ	10	
3.	Աշխատանքի շարադրումը և ձևավորումը	3.1 Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը	10	
		3.2 Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Աշխատանքում առկա են հետազոտությունը և արդյունքները հիմնավորվող հիմնական տվյալներ (օրինակ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	10	
4.	Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը	4.1 Ձեկույցում հիմնավորվում են հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները	10	
		4.2 Ձեկույցը հստակ է և հետևողական, զեկույցողը կարողանում է փոխկապակցված ձևով ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները	10	
		4.3 Հարցերին և դիտողություններին զեկույցողը պատասխանում է հիմնավորված և սպառիչ	10	
		4.4 Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը	10	
ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐ			100	

Ամփոփիչ ատեստավորման նախագահի հաշվետվությունը

1. ԱԱՀ-ի նախագահի հաշվետվությունը պետք է ներառի՝

- տիտղոսաթերթ,
- ԱԱՀ-ի աշխատանքը սկսելու և ավարտելու ժամկետները,
- ԱԱՀ-ի կազմը,
- տվյալ մասնագիտության համար պատրաստվածության թերությունները,
- մասնագետի մասնագիտական պատրաստվածության որակի կատարելագործմանն ուղղված երաշխավորագրեր:

2. Տիտղոսաթերթ

ԱԱՀ-ի նախագահի հաշվետվության տիտղոսաթերթը ձևակերպվում է համաձայն հավելված 4.1:

3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում մագիստրոսական թեզների պաշտպանության արդյունքներ՝ հավելված 4.2:

ԱԱՀ-ի նախագահի հաշվետվության տիտղոսաթերթը ձևակերպելու օրինակ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ Քննարկվել

է ՀՖԿՍՊԻ-ի

Հաստատում եմ՝

գիտ. խորհրդի նիստի ժամանակ

ՀՖԿՍՊԻ-ի գիտ. խորհրդի

նախագահ,

«_____»_____201 թ.

ռեկտոր՝ _____
ստորագրություն

Քաղվածք N _____ «_____»_____201 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների մասին ըստ

«_____» մասնագիտության:

ԱԱՀ-ի նախագահ՝ _____
(ստորագրություն, ամսաթիվ)

ԵՐԵՎԱՆ 20__

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում մագիստրոսական թեզների պաշտպանության արդյունքները

№	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՐ	
		քանակ	տոկոս
1.	Պաշտպանության ընդունված մագիստրոսական թեզներ		
2.	Պաշտպանած մագիստրոսական թեզներ		
3.	ՄԱ գնահատականը.		
✓	Գերազանց		
✓	Լավ		
✓	Բավարար		
✓	Անբավարար		
4.	Մագիստրոսական թեզների ուղղվածությունը		
✓	Գիտահետազոտական		
✓	Գիտամեթոդական		
✓	Պատմավերլուծական		
5.	Երաշխավորված մագիստրոսական թեզների քանակը		
✓	Հրատարակության համար		
✓	Գործնականում կիրառելու համար		
✓	Կրթական հաջորդ մակարդակում շարունակելու համար		
6.	Գերազանցության/կարմիր դիպլոմների քանակը		